

6368

267
U-37

1 OCT 2009

Մ. Հ. ՄԱՐԿԱՆԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԶԱՆԻՑ

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ



Հրատարակութիւն Սբ. Գրական
Այրեներու Կիրակօթեալ գպրոցի միութեան
B. P. 582 BEYROUTH - Liban

1935

ՏՊԱՐԱՆ ՏԱՐՈՂ

2.67

V-37


267

Մ-37

ԵՐԵՎԱՆ ՀԱՅ

Մ. 2. ՄԱՐԿԱՆԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԶԱՆԻՑ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ



«Զանքի մէջ թուլասիրտ չ'ըլլագ
Հոգւով բորբոքեցէք
Տէրոջը ծառայեցէք»

Հրատարակութիւն Սբ. Գրական
Երկիրներու Կիրակօնօթայ դպրոցի Միութեան

B. P. 582, BEIRUT - Liban

Պէյրութ 1935
ՏՊԱՐԱՆ ՏԱՐՈՆ

25 JUN 2013

6368

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ



65502-67

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՑԱՐԱՋԱԲԱՆ	Է.	Ա.
Գլուխ Ա. Պ. Զանից պատմութիւն »	1	
» Բ. Նպատակ և այլ բնեկ »	8	
բակցութիւններէ տարրերւթիւններ		
» Գ. Սկզբունքները »	13	
» Դ. Աւշտը և անգամները »	20	
» Ե. Կազմակերպութիւնները »	27	
» Զ. Կրտս. և պատ. բաժիններ »	33	
» Է. Ք. Զ. ի ժողովները »	37	
» Ը. Ք. Զ. և Եկեղեցին »	41	
» Թ. Ք. Զ. և Աւրիշները »	45	
» Ժ. Ք. Զ. Կ'արգարացնէ՝ իր գոյութիւնը »	48	
» ԺԱ. Ք. Մերձաւոր Արեւելքի երկիրներու մէջ »	54	
» ԺԲ. Ք. Այսօր և վաղը »	65	
» ԺԳ. ՅԱՀԵԼՈՒԱԾ »	77	
Զանից Քայլերգը		
Նիւթեր Դասընթացքի »	85	
Գրացանկ Ք. Զ. գրքերու »	97	

ոմ կը ժղվէրան ըղովթասղիուամ ժոզՈ
 :ժղմանզդրտ լզքման վղուազի դ պոկոյ
 ~քմսե լզտմագունդ («մորտց խանդեղիդ ու վոստ
 ~ովմց) դ լզցու ստի մօմոկ զոգթասղուամր
 դ վժուած շիյ գուամզցունդու սպոկմզ վնկուած
 շանսնդյ ովկիմսժմն ոմը (յ) ևտու մզոցովթ
 ~ութօղուք փսիյու չվժ վր ովոոր զոգթան
 ~կոմզկուք քողտկտու նոզմվ ոչոմզովհար
 ~ունդու — յունզու նզոգթանկոմզկու նվզուած
 զոկտհուառովմց մոչ (լ) ոցզմաւ հ ոկտու
 ~ունու ովկիմսժմն ոմտ դ մոկէ շթումն խանդ
 ոչմզմաց ոչզ քոոզու ոմու խանդուսեղ մոտո
 չվմաւ լու յուկ դ ոչմզվինզու մոոր օզյ ոչմզովթ
 ~մզթ դ ոչմզժմն նմու մս լզու ժուումի նմոյ
 :շիյ շոմզթմզթ ոտետու ոչ քուամետմստո
 մզուառունօւ լու ոչըր տու դ քուակտուատ
 ~ոմց մզոկիմսժմն դ մզժմն ովթուբետու ովոոր
 զոգթանկոմզկու նվզուած զոկտհուառովմց
 մկտուտուու նմու հ չու դ ոզ ոչ քուասուատուու
 մորտց մը վկտուտուու վլուեն դ չամ մկիմսժմն
 ոմտ դ ոչուուսու ոմզժմն մսու ոչինչով

ՂՈՃՈՒՄՈՅ



յասպյյունցը աւնու
 յողմւանկուազից հվյուած յուի
 ~ոկյստովմց վկուած մի մինյու ունը

Գոքրիկ գործով Զանիցի մասին ամեն բան պատմած եղանք, ամենեւին. Քրիստոնէական Զանից Ընկերակցութեան պատմութեան, նպատակին, կազմակերպութեան և այլազան գործունէութեանց շուրջ լիովին դիտնալու համար հակայ գրականութիւն մը կայ արդէն, որուն, անպատճառ, իւրաքանչիւր անզամ և անդամուհի և համակիրներ պէտք է որ մօտենան և անյագաբար կարդան անկէ։ Այդ գըքերուն մէկ փոքրիկ ցանկը պիտի դանէք գրքոյկիս յաւելուածի բաժնին էջերուն վրայ։ (Դ) Այս գրքոյկը պատրաստուած է նաև Միւրիոյ և Լիքանանի Քրիստոնէական Զանից ընկերակցութիւնները մասնաւորապէս ի մտի ունենալով։ Անոր սուղ էջերը պիտի չթոյրատրէին որ, մերձաւոր Արեւելքի երկիրնիրու Հայ Քրիստոնէական Զանից ընկերակցութեանց մասին եւս ծանրանայինք. հոս շատացած ենք միայն յիշել անոնց անոնները և գտնուած քաղաքները ու անցնիլ։

Այս փոքրիկ գործը իր նպատակին հասած և անոր պատրաստութեան համար թափուած նիւթական և բարոյական գոհողութիւններն

ալ արդարացած պիտի ըլլան այն ատեն միայն երբ ան օդտակար կը գտնայ Զանիցի երկսեռ անդամներուն մօտ. և այս փոքրիկ ծառայութիւնը պիտի վարձատրուի այն ատեն միայն երբ Զանիցի անդամներ պիտի սիրեն գործածել զայն

Սոոր պատրաստութեան համար իրենց յօժարակամ աջակցութիւնները սիրով բերած են Օր. Արմենուհի Տէր Պօղոսեան և Պրն. Տէրը առաջինը՝ է. և Ը. գլուխներուն, իսկ երկորոշը՝ Բ. Գ. և Դ. գլուխներուն պատրաստութիւնը ստանձնելով։ Իսկ Տօքթ. Ճ. Հ. Եիրը, Ս. Քրական երկիրներու Քրիստոնէական Զանից ընկերակցութեանց համաշխարհային Միւրիտեան խնամակալներկայացուցիչը, օգտակար եղած է իր շինիչ թելագրութիւններով, և գրքոյկին հրատարակութեանը պատճառ դառնալով։ Այս բաղորին նետ չսորհակալութիւններ նաև Պրն. Օգօստին Պէտիրին իր ըրած օգտակար թելագրութեանց՝ և Պրն. Գալքեպին Պուճիգանեանին Քայլերգին նօթային ընդօրինակութեան համար։ Գրքոյկիս վերջին մասին վրայ պիտի

տեսնէք յաւելուածի բաժին մը եւս ուր պիտի
դաննէք կարգ մը կարեւոր զիտելիքներ և դա-
սընթացքի ցանկ մը:

Մաղթենք որ այս համեստ գործը խթան
մըլլայ, ջանքի մէջ ժրաշան, աղօթքի մէջ
յարատեւ և ծառայութեան մէջ շտւտափոյթ
դարձնելութէ՛ Զանիցի մէջ ևթէ՛ ալ անկէ դուրս
եղող մեր հսկայ Հայ երիտասարդութեան:

Մարտիրոս Հ. Մարկանեան

Սեպտեմբեր 1934
Պեյրարք, Լիբանան,
Սիւրիա

ԳԼՈՒԽ Ա.

Քրիստոնէական Զանից Ընկերակցոթեան
Պատմութիւններ

Կեանքի մէջ չկայ շարժում մը ընկերա-
յին, քաղաքական, գիտական կամ կրօնական
որ իր պատմութիւնը ունեցած չ'ըլլայ. և այդ
շարժումները մէկ կամ մէկէ աւելի սկսողներ
ունեցած են :

Բ. Զանից ընկերակցութիւնն ալ որ-
պէս ընկերային և մասնաւորապէս կրօնական
երիտասարդական շարժում մը ունի նաեւ իր ո-
րոշ և դրական պատճառները սկսելու և ցարդ
շարունակելու :

Այս շարժումը կ'սկսի 1881 ին, Ամերի-
կայի Միացեալ նահանգաց Մէջն նահանգի
Փորբյէնս քաղաքին մէջ :

Այդ տարուան Փետ. ամսոյն երկրորդ օրն
էր Բ. Զանից ընկերակցութեան հիմնար-
կութեան անդրանիկ օրը : Այդ օրը, իրիկուան
դէմ խումբ մը երիտասարդներ Տօքթ. Ֆրէն-
սիզ ի. Քլարքի ընակարանին մէջ խմբուելով

հիմը կը դնեն այն կազմակերպութեան որը տարիներու ընթացքին պիտի ըլլար շատ մը երկուու երիտասարդաց ավաստանարան ու ներշնչարանը թէ՛ եկեղեցին ներս և թէ՛ ալ անկէ բուրս :

1881 ի Յունվար ամսոյն՝ Տօրթ . Քլարքի եկեղեցւոյն մէջ հոգեւոր մեծ արթնութեան ընթացքին բազմաթիւ ապաշխարողներու կարգին Քրիստոսի կը յանձնուէին նաեւ մօտաւորապէս հօ երիտասարդներ : Եւ որպէսզի այդ նորագործ երիտասարդութիւնը հոգեւոր կեանքի մէջ տճէր և Քրիստոսի ու եկեղեցիին համար զօրանար , և ապա ուժգնորէն նետու էր ծառայութեան ասպարէզին մէջ , երիտասարդ քարոզիչը , Վեր . Ֆ . Քլարք կը հաւաքէր զանոնք ու կը դուէր կազմակերպեալ վիճակի մը մէջ . միեւնոյն տոեն տալով այդ կազմակերպութեան Christian Endeavor Society (C . E .) և կամ մեր լեզուով , Բ . Զ . Ընկերակցութեան հրաշալի անունը , Առաջին օրէն իսկ ընկերակցութիւնը կ'սկսի վարել իր ժողովներն և գործունէութիւններ բոլորին կողմէ զծուած Ծրագիր - կանոնագրի մը համաձայն որ գոհացուցիչ կը դասնայ ամենուն :

Ընկերակցութիւնը մեծ յաջողութեամբ և խանդակափառ ընդունելու թեամբ կ'սկսի տարածութիւն Ամերիկայի զանազան քաղաքներու մէջ :

Անոր հիմնարկութենէն ճիշտ 8 ամիս վերջ Մէկշյասէր նահանգին Նիհապրիիորը քաղաքին քարոզիչը Վեր . Զարլզ Փէրի Միլզ , յաշխտակուած ընկերակցութեան յաջողութենէն կ'աշխատի ա'լ աւելի տարածել զայն ամենութեք : Մինչեւ 1881 ի աշնան վերջերը Բ . Զանից ընկերակցութիւնը կը ճամբորգէր զանազան յարանուանութեանց երկիրներէն ներս :

1882 ին , այսինքն , անոր ծնունդէն ճիշդ տարի մը վերջ , ընկերակցութեան անդրանիկ համաժողովը կը գումարուէր Փօրթէնսի Ուիլլամթրնի եկեղեցիի մէջ ուր ան սկսած էր : Երենց ներկայութեամբ համաժողովին կը մասնակցէին Յ ընկերակցութիւններէ պատգամաւորներ միայն . ասոնք համաժողովին ծանօթ ընկերակցութիւններն էին . հաւանաբար գեռ կային շատ մը ուրիշներ եւս որոնք պիտի ուղէին իրենց սիրոյ և համակրանքի բաժինը բերել համաժողովին եթէ տեղւոյ հեռաւորութեան և ուրիշ պատճառներով չարգիլուէին :

Երկրորդ համաժողովին՝ երկու աարի վերջ,
Միացեալ նահանգաց մէջ 53 ընկերակցութիւ-
ներու մէկ ցանկը կ'արձանագրուէր շուրջ 2600
անդամներով : Խոկ 1884 ին ընկերակցութիւն
թիւը կրկնապատկուեցաւ, անանկ որ 5—6
տարուան ընթացքին միայն Ամերիկայի (Մ. Ն.)
մէջ ընկերակցութեանց թիւր բարձրացաւ 5000
ի և անդամներունը՝ 250,000 էս աւելի պատ-
կառելի թուանշանի մը :

1887 ին ընկերակցութիւնը Արեւելքէն
Ատլանդեանը ճեղքելով կուգար Անգլիա, իոկ
Արեւմուտքէն հսկայ խաղաղական ովկեանոսր
անցնելով կ'երթար Աւստրալիա իր դրօշը այն
երկիրներուն մէջ ալ ծածանելու համար :

Կարգ մը Միսիսիպիներու միջոցաւ ան կը
տարածուէր նաեւ Շայրագայն Արեւելքի երկիր-
ներուն մէջ, ինչպէս Ճափոն, Քորիա, Չի-
նաստան, Հնդկաստան և Սէյլան կղղին :

Մէկ խօսքով, տասնեակ մը տարիներ բաւ-
ական կ'ըլլան Զանիցին՝ իր թեւերը տարածե-
լու զբեթէ աշխարհի բոլոր մասերուն վրայ և
մագնիսական ուժով մը իրեն քաշելու հսկոյ
գանգուածը երկսեռ երիտասարդութիւն :

Քանի մը խօսք ալ անոր պատուարժան
հիմնազրին մասին :

Գ. Զանից ընկերակցութեան պատ-
ուական հիմնազրիը եղած է Տօքթ . (Վեր .)
Ֆրանսիզ ի . Քլարք : Ան ծնած է 1851 ին Գա-
նատայի մէջ Ամերիկացի ծնողներէ . բայց եր-
կու տարի վերջ իր հայրը և 8 տարի վերջ ալ իր
մայրը կորսնցնելէ յետոյ, մանուկ Քլարք կ'որ-
դեգրուի իր հօրեղբօրը կողմէ որ կը զրկէ զինքը
դպրոց :

22 րդ . աարիքին մէջ երիտասարդ Քլարք
մած յաջողութեամբ Տարթմօթի Գոլէճը աւար-
տելէ վերջ կը հետեւի Անտօվլը Աստուածարա-
նական դասընթացքներուն : Յ տարիէն այդ
ճեմարանն ալ աւարտելով կը մտնէ կեանքի
ասպարէզր գործելու :

Նոյն տարին, այսինքն, 1876 ին Մէյլի
նահանգի Փուրլինս քաղաքի ճողովական Ուլ-
լըսթըն եկեղեցիին մէջ քարոզչութեան պաշ-
տօնին կը հրաւերուի : Հրաւէրը սիրով կ'ըն-
դունի : Իր պաշտօնավարութեան 5 րդ . տար-
ուան մէջ էր որ Վեր . Ֆ. Քլարք կը յղանայ
գաղափարը Ք. Զանից ընկերակցութեան

հիմնարկութեան և շատ չանցած այդ յղացումը
ծնունդ կուտայ Զանիցի նորածին ընկերակ-
ցութեան :

Տօքթ. Քլարք, Ընկերակցութեան հիմնալի
յաջողութիւնը տեսնելով, որպէսզի կարենայ
աւելի ուշադրութիւն դարձնել անոր, պէտքը
կ'ըզգայ բարոզչական պաշտօնէն հրաժարելու
և ինքզինքը լիովին Զանիցի տրամադրութեան
տակ դնելու :

1888 ի գարնան ան Անգլիա կուգայ և հոն
ալ կսկսի Զանիցի շարժումը : Մօտաւորապէս
հինգ անդամներ ան շրջաններ կ'ընէ այն երկիր-
ներուն մէջ ուր Ք. Զանիցը ծաւալած էր :
Իր մահէն տարի մ'առաջ ան այցելեց նաև Ա-
թենքի Ք. Զանից Ընկերակցութիւննը :
Խմբովին բարի գալուստի այց մը արուեցաւ
Երեն Ֆայերոյի մէջ ուր ինք և իր պատուա-
կան գործակիցը Տիկ. Քլարք, անհուն խան-
դաղատանքով ողջունուեցան, և իրենց դիւդիչ
խօսքերով ներշնչեցին Զանիցները քանի մը ըո-
պէներու մէջ : Ներկաներուն կրած տպաւո-
րութիւնը խիստ մեծ էր և գորաւոր ի տիս Զա-
նիցի պատուական ծերունի հայրիկին և մայրի-

կին որոնք իրենց կեանքի վերջին տարիները
կ'ապրէին ներշնչուած միշտ Զանիցի գաղափա-
րով : Իր վերադաէն քանի մը ամիսներ վերջ
էր որ Տօքթ. Քլարք, 1927 ին այս աշխարհը թո-
ղուց ու երկինք գնաց այն տեղէն դիտելու՝ իր-
մէ յաւէտ բաժնուած Զանիցի կեանքն ու գոր-
ծունէութիւնը :

Գործը զոր ան տարած էր ժրութեամբ և
մեծ համբերութեամբ, թողուց իր պատուա-
կան կողակից Տիկ. Քլարքի և շատ մը ուրիշ ե-
րիտասարդ ուժերու ձեռաց մէջ : Ուրախ ննք
որ Տիկ. Քլարք, Զանիցի մայրիկը, հակա-
ռակ իր ծերութեան և բազում աարիներու
բերին տակ կրած ըլլալուն՝ յարատեւ կ'աշխա-
տի և կ'աղօթէ Զանիցի բարօրութեան համար :



ԳԼՈՒԽ Բ.

Ք . Զ . ի նպատակը եւ այլ Ընկերակցութիւններէ Տարբերակներ

Յոյժ օգտակար է լաւ մը գիտնալ այս կազմակերպութեան ըսկսելու պատմութիւնը . այն ատեն բացորոշ կերպավ կը պարզուի այն նպատակը որուն համար Ք . Զ . ընկերակցութիւնը գոյութիւն ունի :

Խումբ մը երհսասարդներ անցած են հոգեւոր արթնութենէ մը . գիտակից քայլով մը պատախանած են Աստուծոյ հրաւէրին , ընդունած են փրկութիւն Քրիստոսով ու անոր յանձնած են իրենց սիրտը : Մակայն , իրենց համար այս սկիզբ մըն է միայն («Նոր Ծնունդ») և ինչպէս նորածին մանուկ մը կը կարօտի սընունդի , և օդի , ու շարժման , և առաջնորդութեան , նոյնպէս ալ այս նորագարձ Քրիստոնեաները իրենց քրիստոնէութիւնը գործնականի վերածել , և հաւաքը գործունէութեան կեանքի մէջ ամրապնդել պէտք է , կը կարօտին նաև օրէ օր աւելի

լուսաւորուելու եւ հաստատուելու քրիստոնէական գիտութեան մէջ :

Այս պէտքը միշտ գոյութիւն ունի: Հիմա եւս երիտասարդ , պատանի , կամ մանուկ քրիստոնեաներ կան , որոնք պէտք ունին կերպով մը իրենց բովանդակ կեանքով , միտքով , լեզուով , սրտով ու կամքով ապրելու քրիստոնէութիւնը , ապա թէ ոչ մի գուցէ յուսալքուին կամ սխալ առաջնորդուին եւ կամ գաճաճ մնան հոգեւոր կեանքի մէջ :

Միւս կողմէն կոյ եկաղեցին . Քրիստոսի փրկարար Աւետարանը քարոզելու , վկայելու եւ ապրելու վայրն է այդ . գարերով զանազան փուլերէ անցած երբեմն իր կողմանէ անհաւատարիմ , միշտ հարուածուած ու մաքրուած , — ան կը կենայ իբր մարմնացումը Յիսուս Քրիստոսի , աշխարհի վրայ : Բայց հկեղեցին չէ՝ կազմակերպութիւն ու մեքենայ , այլ ան է ինչ որ են իր անհաւաներն ու անզամները : Ու ինչպէս Ֆ. Քլարք կը վերլուծէ՝ եկեղեցին միշտ կը կարօտի Քրիստոսը դաւանող , Անոր ծառայող , հաւատարիմ եւ եղբայրական սիրով լեցուն քրիստոնէաներու :

Ահա թէ ի՞նչ է Քրս. Զանիցի նպատակը — որ
այս երկու պէտքերը լեցուին, եւ մէկը միւսին
միջոցաւ։

Նախ եւ առաջ՝ Ք. Զ.ի մէջ քրիստոնեայ ե-
րիտասարդներ իրենց հոգեւոր կեանքը գործնա-
կանապէս ապրին. ծառայելով իրենց Տի-
րոջը ինչ կերպով եւ ինչ ասպարէզի մէջ՝ որ ալ
ըլլայ. Որքան գեղեցիկ է երեւակայել քրիստո-
նեայ երիտասարդներ, որոնք կողք կողքի, հա-
մագործակցաբար, իրենց տաղանդները ի սպաս
կը դնեն Տրէօջը գործին եւ մարդոց ծառայու-
թեան համար։

Յետոյ՝ երբ այս ընկերակցութեան սկզբ-
րունքները եւ գործունէութիւնները սերտու ին,
պիտի տեսնուի որ ան կը ձգտի քրիստոնեայ
երիտասարդները այնպէս մը զարգացնելու որ
ապագային անոնք լեցնեն եկեղեցին վերոյիշ-
եալ պէտքերը, պատրաստելով հաւատարիմ եւ
ծառայող անդամներ. Նոյնիւն ատկէ առաջ ալ,
ընկերութիւնը ամէն կերպով իր կարելին կ'ընէ,
օգնելու այն եկեղեցին որուն կը պատկանի։
Այս մասին աւելի ընդարձակ կը խօսուի ուրիշ
գլխու մը մէջ։

Բոլոր այս ըսուածները կ'ամփոփուին
կազմակերպութեան նշանաբանով. (Քրիստոսի
եւ եկեղեցւոյ համար)։

Այս կերպով Քրս. Զանից ընկերակցութիւ-
նը կը զանազանուի ուրիշ կազմակերպութիւն-
ներէ. Նախ եւ առաջ՝ ան կրօնական կազմակեր-
պութիւն մըն է. ոչ թէ ուրիշ գործունէութիւն-
ներ — զբական, երաժշտական, մարզական, ըն-
կերպյին — կարելի չեն. բայց կրօնական շեշտը,
առաջին տեղը կը գըստի եւ միւսներն ալ ատով
կը խմորուին ու ատոր կը սատարեն. (Ք. Զա-
նից ընկերակցութեան կրնան անդամակցիլ մի-
այն անոնք որոնք իր հնք զիրենք քրիստոնեայ,
այսինքն, Քրիստոսի հետեւորդներ ըլլալ կը գա-
ւանին)։

Երկրորդ՝ անոր հաւատարմութիւնը առ
եկեղեցին բացարձակ է. Կան այլ կրօնական
կազմակերպութիւններ, ինչպէս Ս. Մ. Ը. Ա. ը նոյն-
քան վեհ իրենց նպատակին մէջ որոնք եկեղե-
ցին անջատ կը գործեն. Իսկ Քրս. Զանից ե-
կեղեցին ծոցին մէջ կը ծանրի ու կ'աճի, եւ
անոր համար կ'ապրի։

Երրորդ՝ երիտասարդական կազմակերպու-

թիւն մ'է։ Առաջնորդներ եւ գործիչներ, բոլորն
ալ երիտասարդներ են, եւ այս կերպով անոնք
կը վարժուին ծառայելու եւ առաջնորդելու։

Ու վերջապէս անիկա համաշխարհայինն է,
չի ճանչնար ոեւէ ցեղային կամ աշխարհագրա-
կան պատուար։



ԳԼՈՒԽ Գ.

— o —

Սկզբունքն է ուրիշ

Նախորդ գլխուն մէջ յիշեցինք այն բանը
զոր Տօքթ. Քլարք կը մատնանշէք իբր եկեղեց-
ւոյն պէտքը. այսինքն, Քրիստոսը դաւանող, Ա-
նոր ծառայող, եկեղեցւոյ հաւատարիմ, եւ եղ-
բայրասէք քրիստոնեաներ։ Ք. Զանեցի ըս-
կզբունքներն են հասնիլ այս պէտքին. ա-
նոնք են՝

1. — Քրիստոսը դաւանիլ.
2. — Քրիստոսի ծառայել.
3. — Քրիստոսի եկեղեցւոյն հաւատարիմ
ըլլալ. և
4. — Քրիստոսի համայն ժողովուրդին հետ
հաղորդակցութեան մէջ ըլլալ։
- ա. — Ինչպէս նախապէս յիշեցինք, ընկե-
րակցութիւնը զուտ քրիստոնէականն է, եւ բնա-
կան է որ անդամները՝ Քրիստոսի համար գոր-
ծելէ եւ իր եկեղեցւոյն օգնելէ առաջ՝ գիտա-
կից ըլլան Ցիսուսը իբր Փրկիչ եւ Տէր ընդու-
նել։ Ասկէ յառաջ կու գայ դաւանութեան

կարեւորութիւնը, օգտակարութիւնը և պէտքը:

Քրիստոնէութիւնը միսիոնարական կրօնք մըն է. — ինչպէս նաև Մահմետականութիւնը. եւ միսիոնարութիւնը յառաջ կը տարուի դաւանութեամբ: (Պուտտայականութեան կամ Մահմետականութեան... սխալ կամ թերի կը-
րօնքներու զօրութիւնը աշխարհի վրայ ասկէ առաջ կու գայ, որ անոնց հետեւորդները չ'ն քաշուիր իրենց հաւատքը դաւանելէ...: Աւե-
տարանական քրիստոնեան էր որ ամենէն շատ կամչնար իր կրօնքին մասին արտայայտուելէ,
ահա թէ ինչու աշխարհիս ամենամաքուր կրօն-
քը այդքան քիչ կ'ազդէ գուրսի մարդոց» (Ձ. Քլարք):

Այն միջոցները զորս ընկերակցութիւնը ի սպաս կը գնէ այս խիստ կարեւոր վարժութեան համար՝ շատ պարզ են: Նախնական քայլն է ըս-
տորագրել գործօն անդամակցութեան ուխտը: Ապաի հեղող Յիսուս Քրիստոսի փրկարար ու-
ժին, կը խոսանամ հետեւիլ իրեն...»: (*) Գե-
ղեցկագոյն դաւանութիւնը հաւատքի, վստա-
հութեան եւ յանձնուած կեանքի:

(*)- Տես ուխտը ուրիշ գւխու մը մէջ

Շարունակական դաւանութիւնը կարելի կ'ըլլայ մասնակցելով շաբաթական պաշտա-
մունքներուն (աղօթաժողովներու եւ ամսական
նուիրման ժողովներու) երգով, աղօթքով, փոր-
ձառութիւն մը պատմելով, կամ Սուրբ Գրքէն
պատշաճ համար մը կրկնելով:

Ա. — Վերեւի դաւանութիւնը՝ բերանա-
ցի է: Ասոր հետ զուգընթաց կ'երթայ գործնա-
կան դաւանութիւնը — հետեւիլ եւ ծառայել
Քրիստոսի: Երիտասարդներ կը սիրեն գոր-
ծունեայ ըլլալ: Այս ընկերակցութեան մէջ՝
անոնք իրենց ուժերը եւ տպանդները ի սպաս
կը գնեն Տիրոջը, եւ անոր կը ծառայեն ոեւէ
կերպով:

Ընկերակցութիւնն ունի զանազան յանձ-
նախումբեր, Անոնք կը նմանին մարմնի մը ան-
դամներուն — իւրաքանչիւրը ունի իր զատ
պաշտօնը և ասպարէզը: Ոմանք աղօթքի. ո-
մանք նոր անդամներ գտնելու և քաջալերելու,
ոմանք միսիոնարական, ոմանք գրական, ոմանք
ընկերային, ոմանք երաժշտական և ոմանք ալ
ելեւմտային — ու այսպիսի ճիւղաւորումներով
ընկերակցութիւնը կրնայ համնիլ այն պէտք-

բուն որոնք կան իր եկեղեցւոյն՝ եւ շրջանակին մէջ՝ հիւրաքանչիւր անդամ, իր կարողութեանը, միտումին և եռանդին համեմատ կը դրուի յանձնախումբերէն մէկուն մէջ։ Այսպէս անոնք կ'ըլլան՝ «բոլորը մէկ մարմին, եւ անոր զանազան անդամները...»։

գ. — Ներկայիս՝ ոեւէ ժամանակէ աւելի՝ եկեղեցին պէտք ունի կերպով մը մօտենալու երիտասարդներու եւ անոնց զգացնելու կարեւորութիւնը եւ կարելիութիւնը առ Աստուած հոգեկան դարձի մը։ Պէտք ունի նաեւ այնպիսիները կապելու իրեն, եւ իր կողքին մեծցնելու եւ կըթելու հաւատարիմ ծառայութեան մէջ։

Ասոր լաւագոյն ազգակներէն մին է այս ընկերակցութիւնը։ Անիկա եկեղեցիէնտարբեր մարմին մը չէ, այլ անոր մէկ մասը։ Իր գոյութիւնը ոչ թէ ինքն իրեն համար է, այլ այն եկեղեցին՝ որուն կը պատկանի։ Զանասէրը հաւատարմաբար կ'օգնէ եւ կը ծառայէ այդ եկեղեցին։ Ոեւէ ընկերակցութիւն ուշրախ կ'ըլլայ երբ տարիներով կըթուած ու գործունեայ անդամ մը կ'անցնի եկեղեցական

պարտականութեան մը գլուխը, հոգ չէ թէ ընկերակցութիւնը կորսնցնէ անոր ծառայութիւնները։

Զանասէրը առ եկեղեցին իր հաւատարմութիւնը կը յայտնէ նաեւ յաճախելով անոր պաշտամունքներուն եւ ազօթաժողովներուն։ Երբիմն կը ստիպուի տեղի տալ եկեղեցւոյ պահանջներուն առջեւ – ինչպէս որդի մը իր հօք հետ եւ վերջապէս, առաջին առթիւ կ'անդամակցի անոր, իր ոյժն ալ միացնելով այդ մարմնայն, եւ այդ կերպով աստիճան մը եւս բարձրացնելով իր օգտակարութիւնը Քրիստոսի համար։

դ. — Այս դարուս մէջ կը չեշտուի եկեղեցիներու միջիւ եղբայրակցական յարաբերութիւնը։ Վատանգներ կան այսպիսի ընթացքի մէջ – թուլութիւն և զիջում։ Սակայն ասոնց առաջքը կրնայ առնուիլ առողջ հոգեւորութեամբ մը, ու այն ատեն Քրիստոսի եկեղեցին աւելի պիտի յասաշդիմէ իր գործին մէջ։ Ամէն պարագայի տակ լաւ է գուրս ելլել կըզգացնեալ եւ լճացեալ վիճակէ մը, և գիտակցիլ թէ բոլոր քրիստոնեաներս եղբայրներ ենք



Քրիստոսվէ Այդպիսի հաղորդակցութիւն մը
կրնայ զօրացնել բոլոր մարմինը:

Եկեղեցիներու միջայարանու անականի, միշտ զգացային, յարտրերութիւնները կը շեշտուին եւ կը կրնային Քրո. Զանից ընկերակցութեան մէջ իր չորրորդ հիմնական սկզբունքն է յարաբերութիւններ մշակել բոլոր անոնց հետ զորոնք Քրիստոսը կը դաւանին: Այս կը սորվեցնէ եղբայրասէր րլլով, իրարու հոգ տանիլ, իրարու համար ազօթել, եւ մանաւանդ ուժերը միացնել ունեէ օգտակար եւ համագործակցական ձեռնարկի մը առթիւ:

Ներկայիս Սիւրիոյ եւ Լիբանանի բոլոր Քրիստ. Զանիցները իրարու հետ յարաբերութեան մէջ են. կամ անհատական թղթակցութեամբ եւ կամ տեղական միութեանց միջոցաւ: Խոկ 1934ի համաժողովը զանոնք իրարու զօրած է աւելի զորեղ կտակով մը, եւ զանոնք մղած է համագործակից ծառայութեան Քրիստոսի հոմար: Յոյս կայ որ մօտ ապագային այնպիսի եղբայրական եւ համագործակցական կապեր պիտի հաստատուին նաև բնիկ (Արար) Քրիստոնեաներու Զանիցներուն հետ Խոկ այս

համաժողովը՝ համաշխարհային Քրիստ. Զ. լնկերակցութեանց կողմէ, (Արք, գրական երկիրներու) համար խնամակալ կարգուած անձը ճանչնալով եւ հաստատելով՝ նոյն ինքը այդ մեծ մարմնին հետ կտակալից եղած է:

Ասսնք էն Քրիստ. Զանից ընկերակցութեան սկզբունքնը:

Ընկերակցութեան մը նպատակը կ'իրագործուի այն չափով որ իր անդամներն ու առաջնորդները ի վիճակի եւ յօժար են հետեւելու անոնց, Ասսնք չորս Սիւներն են որոնց վրայ սիրի կ'անդնի ընկերակցութեան Շէնքը: Ոչ մին կրնայ անտեսել առանց վասնգելու անոր գոյութիւնը կամ կենսունակութիւնը:

թեանց, համագործակցիլ քրիստոնէական ծառայութեանց, մինչեւ որ այդ շրջանակին մէջ իրենք եւս որոշեն Յիսուսի հետեւիլ, ու կարող ըլլան զԱյն գուանելու. Այսպիսիներ կ'ըլլան օժանդակ անդամներ:

Այս երկու անդամակցութիւնները կը գանազանուին այն ու խտով զոր իւրաքանչիւրը կը ստորագրէ: Գործօն անդամակցութեան ու խտը ունի զանազան ձեւեր և ենթակայ է ուեւ փոփոխութեան որ բուն հոգւոյն սկզբունքներուն չազգեր: Մեր Ծրագիր — կանոնագրին մէջ ընդունուած ձեւն է հետեւեալը: —

Ապահինելով Յիսուսի փրկարար ուժիմ՝ կը խոստանամ շնորհ ինչ որ Ամ կը պահանջէ ինձմեն շնորհ:

Կեանին կանոնը պիտի լինեմ Աստծոյ հետ յարաբերութիւն վառ պահել՝ աղօքով և Մր. Գիրք կարդալով:

Պիտի շանամ եկեղեցին զործին ու պաշտամունքներուն աջակցութիւնն ըերել, եւ ընկերակրութեան ժողովներուն մէջ մաս տանել:

Պիտի աշխատիմ ուրիշները Քրիստոսի ա-

ԳԼՈՒԽ Դ.

*Քրիստ. Զանիցի Ուխսը եւ
Անդամները*

Եթէ ընթերցողը Քրիստ. Զանից ընկերակցութեան մասին գիտէ՝ դիտած ըլլալու է թէ ցարդ ըսուածները մեծաւ մասամբ կը վերաբերին ընկերակցութեան (գործօն) յորջորջումի մասին:

Ընկերակցութիւնը ունի երկու կարգի գործող անդամներ. գործօն եւ օժանդակ: Անոնք որ կը դաւանին թէ Քրիստոս իրենց Փրկիչ եւ Տէր է, կ'ըլլան գործօն անդամներ: Անոնցմով է որ ընկերակցութիւնը իրապէս յառաջ կը տանի իր նպատակը ու կը հետեւի իր սկզբունքներուն: Անոնց վրայ կը ծանրանայ նաեւ պատասխանատուութեան մեծ մասը:

Կան նաեւ ուրիշներ, սակայն, որոնք գեռի վիճակի կամ յօժար չեն զգար ընելու սոյն դաւանութիւնը: Բայց եւ այնպէս կը սիրեն մասն ակցիլ ընկերակցութեան գործունէու-

ուազնորդել եւ իր թագաւորութեամ տարածման
համար գործել:

Պիսի յանամ երկրիս յառաջացման եւ մարդ-
կային եղբայրութեամ ողին տարածել:

Փոքը զննութիւն մը պիտի ցուցնէ թէ
այս յիշուած բաները հիմնական են քրիստո-
նէական կեանքի աճման: Քրիստոսի հետեւելու
որոշումը ատոր սկիզբն է, եւ այդ յարաբերու-
թեան շարունակուելովը քրիստոնեային կեան-
քը կը դառնայ աճուն եւ պտղաբեր — որթ եւ
ձիւղեր: Սբ. Գրքի ընթերցումը եւ աղօթք հո-
գեւոր կեանքի սնունդը եւ օդն են: Ըսկերակ-
ցութեան եւ եկեղեցւոյ պարտականութիւն-
ները կատարել՝ հաւատքը գործնականապէս
ապրիլ, հոգեւոր կեանքի մկանները շարժման
մէջ դնել, գործածել, եւ զօրացնել է: Որով,
գործոն անդամակցութեան ուխտը՝ հոգեւոր
կեանքի նկարագրականն է:

Օժանդակ անդամակցութեան ուխտը ա-
ւելի պարզ է:

— Կը խաւանամ կանոնադրութեամ իւսի-
ւիլ ընկերակայութեամն լոյր ժողովներուն, եւ
անոն նպատակին խազործման համար ընել իւսէ

որ կրնամ եւ ինչ որ կ'ակնկազոի ինձմէ:

Քրիստոնէական կեանքը ապրելու համար
ուխտ մը ստորագրելու շիտակ ըլլալուն մասին
երբեմն հարցեր եղած են: Եթէ ընթերցողը այդ
մասին իրական տարակոյսներ ունի կը թելա-
գրենք կարդալ Թրանսիս Քրարքի (The Christian
Endeavor Manual)ի Զ. գլուխը, ուր հարցը ըն-
դարձակ եւ որոշ կերպով դրուած է: Կը քաղենք
մի քանի կէտեր միտայն:

Նախ եւ սուաջ՝ աշխարհի Քրիստ. ընկերակ-
ցութեանց մեծամասնութիւնը կը կային թէ
ուխտը ստորագրելը օգտակար եղած է:

Յետոյ՝ ուխտը կը սկսի սապէս. (Ապաւի-
նելով Յիսուս Քրիստոսի փրկարար ուժին...:
Ասիկա հաւատքի, վստահութեան, եւ Քրիստո-
սի հետ անձնական յարաբերութեան դաւանու-
թիւն մըն է, ուխտը ստորագրողը պարզ յառա-
ջում մը կամ որոշում մը չըներ ինքնիրեն. այս
ինչ բանը ընելու կամ չընելու համար, այլ ուխտ
մը Քրիստոսի հետ, իր խոստումը կատարելու
Անոր զօրութեամբը, առաջնորդութեամբը, թո-
ղութեան եւ սիրոյն մէջ. — ոչ թէ արտաքին
զութեան եւ սիրոյն մէջ. — ոչ թէ արտաքին
ճնշում, այլ չնորհքի որդիական ազատութիւն:

Ան որ օր մը բանաւոր պատճառաւ կը թերանայ ընթեցման մէջ, այդ թերացումով իր ուխտը չաւրեր, ան որ օր մը ժողովի մը կը բացակայի եւ կամ պարտականութեան մը մէջ կը թերանայ պատասխանատու է միայն Տէրօջը, եւ իր պատճաներուն ընդունելի ըլլալը պիտի սրոշէ իր խիղճը պարզելով Անոր առջեւ։ Այս հասկացողութեամբ կը հարթուին շատ մը դըժուարութիւններ։

Այս երկու կարգի «գործող» անդամներէ զատ կալ նաեւ «պատւոյ» անդամակցութիւն։ Համայնքին մէջ կրնան դանուիլ շատ մը անձեր որոնք իրենց տարիքի բերմամբ, երբեմն ալ գործի պատճառաւ, չեն կրնար գործօն դեր ըստանձնել ընկերակցութեան մէջ, թէեւ կը սիրեն զայն եւ կ'ուզեն քաջալերել։ Այդպիսիները կը դըուին «պատւոյ անդամաց» ցանկին մէջ, իրենցմէ ոչ մի բան կը պահանջուի, բաց ի բարոյական քաջալերութիւն, եւ որքան որ կրնան նիւթական օժանդակութիւն։

Այս անդամակցութիւնը զանց պէտք չէ ընել։ Յաճախ ասոնք ընկերակցութեան մը ողնայարն եղած են։ Եւ կամ իրական կապ մը

եկեղեցւոյ եւ ընկերակցութեան միջեւ, Այս նոյն ցանկին պէտք է անցնել ոեւէ անդամ որ տարիքի բերմամբ այլեւս չկրնար ընկերակցութեան մէջ գործօն դեր մը ստանձնել։

Գլուխը չվերջացուցած՝ կ'ուզենք մատնանշել երկու թիւրիմացութիւններ որոնց երբեմն կը հանդիպինք։ Թէ՛ օժանդակ եւ թէ՛ ալ գործօն անդամները որակեցինք «գործող» եւ դիտմամբ, երբեմն, «գործօն» յորջորջում թիւրիմացուելով, ոմանք կարծած են թէ գործօն եւ օժանդակ անդամակցութեան տարբերութիւնը կը կայանայ ընկերակցութեանց մէջ գործօն դեր մը ունենալու կամ չունենալու մէջ։ Սակայն մասնաւոր սահմանումներով երկուքն ալ ունին գործօն դեր, այն անդամը որ ոեւէ գործ չկրնար ստանձնել, կ'ըլլայ պատւոյ անդամը եթէ կը փափաքի։ Խսկական տարբերութիւնը սւխտի մէջ է։

Աւելի վտանգաւոր թիւրիմացութիւն մը օժանդակ անդամակցութեան բուն նպատակը հասկնալուն մէջն է։ Ֆ. Քլարք այս մասին այնքան առաջ կ'երթայ որ կ'ըսէ նոյնիսկ թէ ընկերակցութիւնը իրականապէս միայն մէկ

տեսակ անդամակցութիւն ունի — զործոն։ Ա-
սով կ'ուզէ բացատրել թէ օժանդակ անդա-
մակցութիւնը վերջնական գոյավիճակ մը չէ։
անիկա քայլ մըն է միայն որ պիտի ծառայէ
մէկը առաջնորդելու յաջորդ քայլին — Քրիս-
տոսի հաւատալով իրեն յանձնուելու — որ զինք
կարող պիտի ընէ զործօն անդամ ըլլալու։
Այս սխալը շտկելու համար պատասխանատու-
են եկեղեցւոյ հովիւները, զործօն անդամները
եւ օժանդակ անդամները միանդամայն։



ԳԼՈՒԽ Ե.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԸ

Քրիստ. Զանից ընկերակցութիւնը, ինչ-
ովէս ուրիշ շատ մը ընկերակցութիւններ, կա-
նոնաւոր կերպով կազմակերպուած վիճակի մէջ
է։ Ան ունի գիւան մը 4 կամ 5 եւ երբեմն
ալ 6 հոգիներէ բաղկացած եւ յանձնախումբեր
որոնք ընկերակցութեան գործը կը վարեն կա-
նոնաւորապէս՝ պահանջուած պարագային։

Ծնկերակցութեան բոլոր անդամները ան-
խուիր գործ մ'ունին կատարելիք այս կամ այն
յանձնախումբին մէջ։ հետեւաբար ընկերակ-
ցութիւնն ունի չորս գլխաւոր եւ ուրիշ քանի
մը երկրորդական կարեւորութիւն ունեցող
յանձնախումբեր։

ԴիիԱՆՆԸ. — Դիւանը կը բաղկանայ հետե-
ւեալ պաշտօնեաներէն — Նախագահ, Փոխնա-
խագահ, Քարտուղար (երբեմն երկու) եւ Գան-
ձապահ։ Դիւանի անդամները պէտք է ըլլան
կարող իմացականութեամբ, անբասիր նկա-

բազրով, փորձառու կեանքով եւ յարատեւ յաճախողներ Զանից բոլոր ժողովներուն։ Ասոնք բոլորն ալ կ'ընտրուին անդամներուն գոյ քուէովը։

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Նախագահին պարտականութիւնն է հսկել ընկերակցութեան բոլոր գործերուն վրայ, ան կը հետեւի յանձնախումբերուն գործերուն եւ իր թելաղրութիւնները կ'ընէ պէտք եղած պարագային։

Ան բոլոր յանձնախումբերուն բնական անդամն է եւ հետեւարար կրնայ ներկայ ըլլալ անոնց ժողովներուն։ Ընկերակցութեան հոգն ու պատասխանատուութիւնը անոր ուսերուն վրայ կ'իշնայ։

Փոխ—Նախագահի՝ նախագահին բացակայութեանը միջոցին անոր պարտականութիւնները կը կատարէ, բայց միշտ սպասելու չէ որ նախագահը բացակայի. միշտ անոր օգնականն է։ Երբեմն ընկերակցութեանց մէջ շրջահայեց յանձնախումբին ատենապետի պաշտօնն ալ կը կատարէ ան։

Քարտուդարը կը պահէ վարչական մարմնի նիստերուն ատենագրութիւնները, ընկերակ-

ցութեան անդամներուն եւ պաշտօնեաներուն անուանացանկը եւ կը թղթակցի ուրիշ ընկերակցութեանց հետ հարկ եղած պարագային։ (Այս վերջին գործը պարտականութիւնն է թղթակցութեան քարտուղարին եթէ ընկերակցութիւննը ունի հատ մը). Առուիրման ժողովներուն մէջ ան կը կարդայ նաեւ անդամներուն անունները եւ կը պահէ ընկերակցութեան բոլոր կարեւոր թղթակցութիւնները։

Գաևնականիլ ընկերակցութեան ելեւմտական գործերուն վրայ կը հսկէ։ Կը գանձէ անդամներէն շաբաթավճարները կամ ամսավճարները եւ կը վճարէ այն բոլոր ծախքերուն համար որոնք վարչութեան հաւանութեամբը եղած են։

ՅԱՆՁՆԱԽՈՒԹԲԵՐԸ. — Ընկերակցութիւնը չորս գլխաւոր եւ էական յանձնախումբեր ունի — Շրջակայեաց, Պաշտամունիքի Ընկերային եւ Գրական կամ Կրթական յանձնախումբ։ Ասոնցմէ զատ կան նաեւ թերեւս այնչափ կարեւոր ուրիշ քանի մը յանձնախումբեր եւս որոնք խիստ օգտակար են ընկերակցութեան բարգաւաճմոն համար. անոնք են Պատամեաց,

Երաժշտական, Եղեռմտական, Միսիոնարական,
Ծաղկի եւայլն յանձնախումբեր:

ԱՆՈՒՅ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երգահայեաց յանձնախումբին պարտականութիւնն ընկերակցութեան նոր անդամներ պահովել, նորեկներու հետ մտերմանալ եւ բարեկամութիւն մը մշակել: Անոր անդամները կ'այցելեն ընկերակցութեան բացակայ անդամներուն տուները եւ կը հասկնան պատճառները: Անոնք կը գիւրացնեն նաեւ ուրիշ յանձնախումբերու գործերը:

Պահտամունիքի յանձնախումբը յայտադիրներ կը պատրաստէ, աղօթաժողովներ կը սարքէ եւ անդամներուն գործ կը հայթհայթէ այդ յայտագիրներուն մէջ: Ամէն գնով ան կ'աշխատի ժողովները հետաքրքրական դարձնել:

ՀԱԼԵՐԱՍՅԻՆ յանձնախումբը կը սարքէ ընկերային երեկոյթներ եւ ցերեկոյթներ եւ ուրիշ այլազան հաւաքոյթներ ուր անդամները իրարու հետ ծանօթանալու եւ բարեկամանալու առիթներ կ'ունենան: Ան կը պատրաստէ երբեմն դաշտագնացութիւններ, լինագնացութիւններ եւ երբեմն ալ ծովագնացութիւններ:

Գրական յանձնախումբը իր տրամադրութեան տակ կ'ունենայ գրադարան մը ճոխ գրքերով եւ թերթերով: Ան կը սարքէ գրական հաւաքոյթնիր — վիճաբանութիւն, արտասանութեանց մրցում, եւ բանախօսութիւն: Անոր պարտականութիւնն է անդամներուն մէջ մշակել գրական եւ գեղեցկագիտական ճաշակ մը համցնելով այդ կարգի հւ ճիւղի ընտիր գործեր:

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Վարչական մարմինը կը բաղկանայ գիւղանի անդամներէն եւ յանձնախումբերու ատենապետներէն իրենց հետ ունենալով նաեւ տեղոյն քարոզիչը: Ան կը հսկէ ընկերակցութեան բոլոր գործերուն վրայ: Ան իր նիստերը կ'ունենայ առնուազն ամիսը անգամ մը, յանձնախումբերուն ծրագիրները վաւերացնելու, կամ չեղոքացնելու եւ կամ ալ նոր ծրագիրներ մշակելու:

Դիւանի եւ յանձնախումբերու ընտրութիւնները տեղի կ'ունենան առհասարակ տարին անգամ մը, բայց երբ տեղական պայմանները

այդ շրջանէն աւելի եւ կամ պակաս ժամանակի մը համար կը պահանջեն ըստ այսմ կրնան ընտրութիւնները ըլլալ։ Դիւանի տնդամները պէտք է գործօն անդամակցութեան մէջ հղած ըլլան։

ՏԵՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Տեղական միութիւնը կը կազմուի քաղաքի մը զանազան եկեղեցիներուն մէջ գտնուող Քրիստ. Զանից ընկերակցութեանց կողմէ ղըրկուած անդամներով։ Խւրաքանչիւր ընկերակցութիւն կը դրկէ մէկէ աւելի անդամներ կազմելու համար Տեղական Միութեան Դիւանն ու Վարչութեան անդամները։ Անոր նախագահը իշխաւասութիւն ունի հսկելու ընկերակցութեանց բոլոր գործունէութիւններուն վրայ եւ ներկայ ըլլալու անոնց ժողովներուն։

ԳԼՈՒԽ Զ.

ԿՐՏԵՐԱԿ ԵՒ ՊԱՏԱՅԱԿԻԱԿ ԲԱԺԻԱԱՆԵՐ

Քրիստ. Զանից ընկերակցութիւնը երեք բաժանումներ ունի, որոնք են կրտսերաց, Պատանեաց եւ երիտասարդաց բաժինները։ Այս մասնաճիւղերը բնորոշող ճշգրիտ տարիքի թուականներ չկան։ բայց Զանիցի հեղինակներու կողմէ որդեգրուած տարիքներն են կրտսերներուն համար 9էն մինչեւ 14, պատանեաց համար 14էն 17, իսկ երիտասարդաց համար 18էն 25 եւ երեխն ալ մինչեւ 30։ Ինչպէս ըսուեցաւ ասոր համար գծուած օրէնք մը չկայ, յարմարութեան համեմատ կը բաժնուին։

Շատ մը տեղեր կրտսերաց եւ պատանեաց մասնաճիւղերը անտեսուած են կարծես, եթէ ոչ բոլորովին անտեսուած, գոնէ պէտք եղած հոգն ու խնամքը զլացուած է անոնցմէ։ Այս, մեծ թերութիւն մ'եղած է թէ՛ քարոզիչներուն՝ եւ թէ՛ ալ երիտասարդաց համար։

Շատ անգամ կը մոռնանք թէ պատգայ երիտասարդաց բաժնի շարքերը լրացնողները այս երկու բաժինները պիտի ըլլան, եւ անկէ վերջ ալ անոնք պիտի ընդունին և կեղեցւոյ անդամակցութիւնը։ Այս ճշմարտութիւնը գիտնալով հանդերձ մենք թերացած ենք մեր կրտսեղաց եւ պատանեաց բաժիններուն անհրաժեշտ կարգադրութիւններն ընելու։

Առաջին անգամ պատանեաց Քրիստ. Զանից բաժինը սկսաւ Գալիֆորնիոյ մէջ 29 Մարտ 1883ին։ Ասոր յաջորդեցին ուրիշ շատ մը նոյնատեսակ բաժիններ ուրիշ տեղերու մէջ։

Քրիստ. Զանիցի հիմնուած ատենը արդէն պատանի մանչեր ու աղջիկներ կային, բայց բոլորը երիտասարդ թէ պատանի միեւնոյն ընկերակցութեան մէջ մնացին մինչեւ որ վերոյիշեալ բաժանումը եղաւ եւ ծնունդ տուաւնոր մասնածիւղի մը։ Բաժանման եւ կամ նոր սկսուելուն պատճանները խիստ որոշ է, երիտասարդաց եւ պատանեաց միջեւ եղած տարբերութիւնը ահագին է, անոնք կը տարբերին տարբերով, դաստիարակութեամբ եւ ձաշակով։ Երբեմն առարկողներ կան թէ պատանեաց

եւ կամ կրտսերոց բաժիններուն առանձին պէտքը չկայ քանի որ նոյն տարիքը համապատասխանող դասարաններ կայ կիրակնօրեայ դպրոցին մէջ, ճիշտ է, բայց կիրակնօրեայ դպրոցի կազմակերպութիւնը Զանեցի կազմակերպութենէն կը տարբերի, թէեւ ոգիով անոնք իրարու կը համապատասխաննեն եւ լրացուցիչներ են իրարու, բայց եւ այնպէս գործնականին մէջ ահագին տարբերութիւն մը կայ։

Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները չունին այն պատեհութիւնները իրենց սորվածը գործնականացնելու ինչ որ Զանիցը ունի եւ կամ կընայ ստեղծել երկրորդ՝ կիրակնօրեայ դպրոցի աշակերտները որոշ ուխտ մը չունին որուն պատասխանատուութիւն հրահրէ զիրենք աղօթելու, Սր. Գիրք կարդալու եւ գործնական ծառայութիւններ մատուցանելու, Պատանեաց Զանիցը ունի իր սեփական ուխտը ստորագրուած եւ սկզբունքները նախագծուած, որոնց կընայ հետեւիլ հոււատարմօրէն։ Կրտսերոց կընայ հետեւիլ հոււատարմօրէն։ Կրտսերաց եւ պատանեաց Զանիցները նախաքայլերն են Քրիստ. Զանիցին եւ անկէ ալ դէպ ի աւելի մեծ ասպարէզը — դէպ ի Եկեղեցին։ Կիրակնօ-

րեայ դպրոցներու կատարած դիրը անուրանալի է, եւ տակաւ ին կրտսերած և պատաննեաց Զանիցներու պակասը տմհնուրեք զգալի է որոնց դոյութեան համար պէտք է աշխատինք:

Կրտսերած եւ Պատաննեաց բաժինները կազմակերպուած են ճիշտ ու ճիշտ երիտասարդաց բաժնին պէս, միեւնոյն Ծրագիր կանոնագիրն է զոր կը պատրաստէ զանոնք եւ գործի կը մղէ, միայն սա տարբերութեամբ որ տարիքի եւ կրթութեան պայմանները նկատի առնուած են:

Այս մասնաճիւղերը ունին իրենց անդամներէն ընտրուած դիւան մը եւ յանձնախումբեր, բայց որովհետեւ ինքնավարութեան մէջ դեռ անոնք անփորձ են, իրենց հետ ունին վերահսկիչ մը զիրենք ուղղելու եւ թելադրութիւններ ընկելու համար: Վերահսկիչը կ'որոշուի Քրիստ. Զանից ընկերակցութեան կողմէ եւ պաշտօն ունի հսկելու եւ վարելու բոլոր գործերը:

ԳԼՈՒԽ Է.

Քրիս. Զանից եւ իր ժողովները

Զանիցի ամենակարեւոր գործունէութիւնները իրեն շաբաթական աղօթաժողովներն են որոնց իւրաքանչիւր անդամ պէտք է ներկայ զանուի ու իր մասնակցութիւնը բերէ: Այս ժողովներն են որ Զանիցը հոգեւոր մարզարան մը կը դարձնեն ուր անդամները կը հաւաքուին աղօթելու, երգելու, Սր. Գիրք սերտելու եւ բարեկամական վկայութիւններ լւաբելու:

Հայր Քլարք, իբրեւ անձնական համոզում կը շեշտէ շաբաթական աղօթաժողովներու անհրաժեշտութիւնը: Նատ փորձեր եղած են ընկերակցութեան բոլոր ժողովները վերածելու, երաժշտական, գրական, բանախոսական եւ ընկերային հաւաքոյթներու, սակայն գժբախտաբար այս ծրագրով ընկերակցութիւնները իրենց նպատակէն շեղած են: Սոյն հաւաքոյթներն իրենց տեղերն ունին իբրեւ աղդակներ բազմակողմանի կեանքի մը յառաջ

գալուն, բայց երբ անոնք կը գերազասուին ընկերակցութեան սիրտը եղող ժողովսերէն, այն ատեն սիրտը զադրած կ'ըլլայ գործելէ ու ոտքերն ու ձեռքերն են որ կը գործեն ինչ որ քիչ ատենէն կը դադրի: Ընկերակցութեան ջերմաչափը եղող պաշտամունքները որչափ հուանդուն եւ մասնակցողները բազմաթիւ ըլլան, ընկերակցութիւնը նոյնքան յուսալից եւ պատղառու կ'ըլլայ:

Շատեր ընկերակցութեան աճելուն վնասելու չափ սխալ հասկացողութիւններ ունեցած են պաշտամունքներու ձեւին մասին: Զանոնք վերածած են լսարաններու եւ յաճախ ալ մանրանկարը եկեղեցին: Անոնք Զանիցի ժողով ըլլալէ զատ ամէն բանի կը նմանին, քանի որ մասնակցողներու թիւը կը սահմանափակուի եւ կամ ալ միհեւնոյն անձերն են որ բաժին կ'առնեն: Իւրաքանչիւր անդամ եթէ ոչ ամէն շաբաթ, գոնէ ամիսը երկու երեք անդամ պէտք է ժողովսերուն մասնակցի աղօթքով, երգով մը, եւ կամ խօսելով:

Մարդ բանաստեղծ կամ հոետոր մ'ըլլալու պէտք չունի իր եւ իր Աստուծոյն մըջեւ եղած

յարաբերութեան մասին խօսելու. այս խօսելիք բան չէ այլ ապրուելիք:

Այս բոլորին մէջ կարեւորագոյն տեղը կը բոնեն նուիրման ժողովսերը, ուր իւրաքանչիւր անդամ իր ուխտը կը նորոգէ: Շատ փափաքելի էր որ այն օրուան առաջնորդը հոգեւոր կեանքի մէջ փորձառու և ազգեցիկ միջավայր մը ստեղծող մէկը ըլլար: Առաջնորդը շինիչ նիւթի մը շուրջ մի քանի վայրկեան խօսելէ վերջ, ընկերակցութեան ատենազպիրը կը կարդայ անուանացանկը և իւրաքանչիւր անդամ իր բաժինը կը բերէ նախապէս պատրաստուած երգով մը, աղօթքով մը և կամ ալ խօսելով:

Ինչպէս կը տեսնենք այս ժողովսերը իբր կրթարան կը ծառայեն, հոն է որ անդամները կը սորվին տալ և առնել, օգնել և օգտուիլ իրարու փորձառութիւններէն և դժուարութիւններէն ստեղծելով հոգեւոր մթնոլորտ մը: Այս հոգիով ու սիրով անոնք կ'երթան զանազան վայրեր, և կ'աշխատին ապրիլ ինչ որ խօսած ու լսած են: Այսպէսով պաշտամունքները կը դառնան վերանորոգման և ներշնչման սլըրավայր մը ուր կը տեսնեն իրենց վրկիչը իբր

առաջնորդ, իր բոլոր վսեմութեամբ, անրծութեամբ ու Աստուածութեամբ առջեւնին դրսուած. եւ հոս է որ կրկին միասնաբար կը յիշեն իրենց վեհ նպատակը ապրիլ՝ «Քրիստոսի եւ եկեղեցին համար»:



ԳԼՈՒԽ Ը.

Քրիստ. Զանից եւ Եկեղեցին

Զանից եւ Եկեղեցի — ահաւասիկ երկու բառեր որոնք իրարու կը յաջորդեն ու միշտ իրարմէ անջատ կը մնան: Ուր որ ալ ըլլայ Քրիստ. Զանից Դրօշակը կը ծածանի, «Քրիստոսի եւ Եկեղեցին համար»: Զանից եւ Եկեղեցի, ծնողքի եւ զաւկի փոխադարձ սիրով իրարու կապուած են: Սուանց Եկեղեցիի մը Զանից գոյութիւն չունի. ան ծնած է, կը մեծնայ ու կը մնայ Եկեղեցին ծոցին մէջ ու անոր հովանաւորութեան տակ: Եկեղեցին երիտասարդ զաւակներուն յատուկ մէկ կազմակերպութիւնն ըլլալով, ան կ'աշխատի Եկեղեցին հեռացած երիտասարդութեան համար ու Եկեղեցին մէջ գոյութիւն ունեցող պարապութիւնը լցնող տարրը ըլլալ:

Սա որոշ գիտենք որ Քրիստ. Զանից ընկերակցութիւնը Եկեղեցին մէջ սկսաւ Տօքթ. Քլարքի յարատեւ աշխատութեան իրը ար-

~ոյտ վեպոց մակա զուրածօնիտ ոչտ ոգ
:«Դ պինգեղի ևս զմուե մարտաց զողթի
~շանմոռտավմգ տիգոց» :Շգնստ պինմոռտավմ
~գ հզն մի լուրիտմտիտեա մր վժուոգի զոյրի
~տոստովմմ ու հմզմ մի բդն սու յհն մոստավմ
~մք. մս հ վեպոց կովր եմու «շոլդքոքմս մմ
~զբաս նմոռտավմգ ոզ ևսմուի մզոցովթյանիտմ
~զիոդ մր տու նվմր է հոտն մի մչմու ոչոցըտ
մրտանի շալզնչմզգ մր ժուոգի մարգեա զողթի
~շանմոռտավմգ մկ մեպոց «ոյտկոտ ոգ
:իսլզոստ պիրտմ
զուրիտմն նշր շամգքմս նվմր ոգ պիմր տափոհեմգ
«զինմեն պիմացոյրու «զինմեն նոգմօզկոմ
~զի լուցո հետակ զու «կուզվմօմոց» տուրան լու
կթ ոգ ոմզու ոչինգեղի կթ մտկոտեօ լուզտան
իտոգմտի յտանդա մովիզոտմուկ իսմս մր պիրթ
~շանսմուի զովեոցտ լոկույր հետակ նշր վյոտն
~զու մավիզոտմուկ «ոյտմութմկ մմկ մեպոց
:ովիմուլը մկ ժահիտ
ժուսդու մս մրս ոգ ովկոտկատեօ մի ժուսդու մս
մրս ժուսդու լուցն ու ոկտումտան մր ովթյան
~մոռտավմգ իսլուհավ մչմու «մրագթ ատիտար
նմստ հքեզտու մի բակը մեպոց իսմզոթիմ

~տուաչ ովիմումգիկը միոցտը ովկուսը ոյտշտեն
զուկոմգ շալզնցար ժուօմկի նշր վժմսցուց մեվու
~տօն «զրաւուլը մկոտմացուց ու բաովկւտ «ոյտան
շպտակ եկտ ոչիրտ մուվթյանմոռտավմգ
:ովմժուոգի ու ովկուս պոգթյանմտու
~տավմգ զուրածօնիտ ի պյունտոցմոր ովինցեղիկ
զուրանեաի ու «Դ պինգեղի զուրանեաի մուվթյ
~շանմոռտավմգ զուրածօնիտ մս վզոտ մոյրոց
ովիմնցնցի ու նշր ովինցեղի կվազոքմսն
ովիմուկի ժու ովինցեղի կվազոքմսն
ժակուս ովկուսը շակուրաչ ևսնցուց
ժահիտ զուգթյանեան կտուվէ մկ քուզտավուուու
ոչմրանտի մմկնոցը զոգթյանիտմգիկը
:«Դ զուվթյանմոռտավմգ ևս զմս մտրոց պիկն
~զեղի մեպոց» «Դ քոու մկնշր մս ոչինչու
·մոյրոց ովրբնտմցմու ու զոյրբնտմօս մսոտ
իսլզտավշտ շալզնակ (ովինցեղի բվ) ովինցեղի
~զ քուզտատեօ մկ ժտեն մի տանեց մժովկեթու
րունոտ եվզոց «Դ կույր նշր ովկուսնակ մկ ոյտե
լումտմ ու ովինցեսմու լուցո «ոյտամզիսեար
~տթօետ մսոտ լոյտոցու «ովինցեղի մկ լու
~լը կունցու նշր մկ ժուուու մսոյը
:բունդու վեպոց վինցեղի նովոյտ բուկ նով
~ուոտ մմկ վրանցուոց մի բունդու ոչիրը :մուվթյ

դամները վաղուան գօրաւոր եկեղեցիին առաջ-
նորդները կ'ըլլան, եւ անոր համար ամէն գը-
նով կ'աշխատին: Վերջապէս Զանիցը այն ճամ-
բան կամ կամուրջն է ուրկէ երիտասարդու-
թիւնը եկեղեցի կուգայ հոն կը կրթուի կրօնա-
կան սկզբունքներով եւ Աստուծոյ թագաւո-
րաւթեան մէջ գործելու պատրաստ ուժեր գառ-
նալով: Ուստի Զանիցը բարոյապէս եկեղեցիին
հոգին՝ գործնականապէս անոր գործող մէկ մե-
քենան կամ ձեռքն է. իսկ եկեղեցիին հովիւն
ու սարկաւագները անոր ուղղութիւն եւ խրա-
խոյս տուղներն են: Եկեղեցի եւ Զանից ամ-
բողջութեան մը մասերն են:



ԳԼՈՒԽ Թ.

Քրիստոնիչ եւ Ռուփիշները

Կեանքը որուն մէջ կանչուած ենք ապ-
րելու, եթէ առանձին ու միայնակ ասհման-
ուած ըլլար ապրելու իսկապէս անտանելի պի-
պի ըլլար: Եւ մարդիկ կեանքի գառնութիւն-
ները չափաւորելու եւ մեղմացնելու, եւ մին-
չև իսկ վերցնելու համար ի սպառ, համա-
գործակցութեան անհրաժեշտ պէտքը զգացած
են շարունակ. զի խորապէս զգացած են որ
առանձին, կեանքի ցաւերը չեն բուժուիր,
հարցերը չեն լուծուիր եւ ակնկալուած բարօ-
րութիւնն ու խաղաղութիւնը շուտով չի գար:

Քրիստոնիցը ընկերակցութիւնը ուժ-
գնորէն կը հաւատայ այս ճշմարտութեան եւ
անոր իրականացման համար իր ջանքերը չի
զլանար բնաւ:

Ուրիշները ըսելով մենք հոս ըսել կ'ու-
ղենք բոլոր մարդկութիւնը, առանց ազգի, ա-
ռանց ցեղի, առանց կրօնքի եւ դաւանանքի

խորութեան։ Զանիցը թէնւ կը պատկանի քրիստոնեայ եկեղեցին, թէնւ ան ծնունդ առած է եւ հասակ նետուած՝ եւ իր գործի առապարէզը ընտրած է Աւետարանական յարանուանութեանց եկեղեցիներէն ներս, սակայն եւ այնպէս, ան ինքզինքը ի սպաս դրած է մարգկութեան բոլոր խաւերուն եւ անդամներուն համար։ Քանի որ ան կը հաւատայ Տիեզերքի Արարշին հայրութեան եւ համայն մարգկութեան եղբայրութեան, ուրեմն ան չի կրնար չաղօթել, չօգնել եւ չի ծառայել ուրիշներուն եւ չի կրնար չաշխատիլ ուրիշներուն մէջ Քրիստոսի համար։ Յիսուս երբ իր աղօթքներուն գլուխ գործոցը յօրինեց եւ արտասանեց («Հայր մեր որ յերկինս ես»), խօսքէն գործի անցաւ։ Ան հետաքրքրուեցաւ Սաւմարացիներով։ Եւ իր մեկնումէն առաջ ըստի աշակերտներուն՝ («Գացէք բոլոր աշխարհ, ու Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն»)։ (Ուրեմն գացէք բոլոր աղքերը աշակերտ աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք յԱնուն Հօր եւ Որդույ եւ Հոգւոյն Սրբոյ)։

Այս Յիսուսի զմայլելի պատուէքն էր իր

ժամանակակից աշակերտներուն։ Հոս տիեզերական եղբայրութեան անկեղծ հոգին է որ կը բուրէ ու կը շեշտուի։ — Եղբայրութիւն մը որ նիւթէն եւ գձուձ հաշիւներէն շատ վեր է։ Եղբայրութիւն մը որ գիտէ ուրիշներուն համար զոհուիլ։

Յիսուս իր պատուէքը կ'ուզդէ նաեւ Զանիցի անգամներուն։ («Գացէք եւ ծառայեցէք ձևաբաններուն։ Ակսեցէք նախ ձեր պատկանած եկեղեցին եւ ազգէն ու ապա գացէք բոլոր մարգկութեան։ Աւետարանեցէք զանոնք յանուն Սիրոյ եւ խաղաղութեան եւ անկեղծ եղբայրութեան»)։

«Ելբայր ենք մենք մեկ հօր որդիի»,

Զկայ մեր մեջ մեծ ու պատիկ.

Մեկ ուսուցիչ ունինք Յիսուս,

Մեկ մեր հաւատք, եւ մեկ մեր յոյս»։

Այս ոգին է որ ունի եւ պէտք է աւնենայ Զանիցը որպէս զի կարենայ ծառայել ուրիշներուն։ («Զանիցը Քրիստոսի եւ եկեղեցւոյ համար») կը նշանակէ Զանիցը ուրիշներուն համար, Զանիցը բոլորին համար։

ԳԼՈՒԽԻ Ժ.

Քրիստ. Զանից կ'արդարացնէ
իր գոյութիւնը

Ամէն կազմակերպութիւն կամ ընկերակցութիւն նպատակի մը շուրջ է որ կազմակերպուած է. առանց նպատակի, ուրեմն, հաստատութիւն մը չենք կրնար երեւակայել: Մեր շատ մը աննպատակ խորհած կազմակերպութիւններն իսկ ունին իրենց որոշ եւ ուրոյն ծրագիրը:

Քրիստ. Զանից ընկերակցութիւնն ալ ունի իր որոշ ծրագիր — կանոնագիրը՝ ինչ որ տեսանք արդէն նախորդ էջերուն մէջ, թէ որչափ ան կրցած է իր նպատակը իրականացնել, այս գրքոյին էջերը պիտի չթոյլատրէին որ երկարորէն ծանրանայինք:

